են նրանք եւ, որպէս օտար աղբիւր, առաջնակարգ արժէք են ներկայացնում:

Բողենշտէդտ ինքը, դեռ Երեւանում եղած միջոցին, յանձին Աբովեանի տեսել ու ճանաչել է ուրեմն մեր ազգային-մշակութային վերածնութեան ռահվիրային: Ըստ ամենայնի՝ իրականութեան էլ համապատասխանում է նրա այն յատկանշումը, թէ հայոց (արեւելահայոց) նոր գրականութիւնը Աբովեանից է սկսում:

Միւս կողմից՝ Բողենշտէդտ վկայում է, որ Աբովեան գիտութեան մարդ է եղել, որ նա մշակած ու պատրաստած է ունեցել աշխարհաբար հայերէնին վերաբերող ուսումնասիրութիւններ, դրանց թւում նաեւ՝ աշխարհաբարի բառարանը եւ քերականութիւնը:

Բողենշտէդտ վկայում է միեւնոյն ժամանակ այն յուսախաբութեանց մասին, որոնց ենթարկւում է Աբովեան, եւ որոնք ի վերջոյ խորտակում են հայ լուսաւորութեան առաքելի կեանքը:

Ոչ միայն եւ կամ, աւելի ճիշդը, ոչ այնչափ յետամնաց, խաւար հայ իրականութիւնն է լինում, վերջին հաշուով, որ Աբովեանի անձնաւորութեան եւ նրա միջոցով հայ ազգային վերածնութեան առաջ անյաղթահարելի դժուարութիւններ է բարձրացնում սկզբից իսկ, այլ՝ Ռուսաստանի քաղաքականութիւնը հանդէպ մեր ժողովուրդի, ինչպէս նաեւ առհասարակ բոլոր հպատակ ժողովուրդների:

Ա՛յն աստիճան այլամերժ, դաժան է եղել այդ՝ ռուսացնող քաղաքականութիւնը, որ ոչ միայն հիմքում իսկ խեղդել է հայութեան քաղաքական-ինքնավարական զարթօնքի բոլոր ազդակները, այլ եւ պատուարներ կանգնեցրել հայ լեզուի ու առհասարակ հայ մշակոյթի, հայ գիտութեան զարգացման առջեւ:

«Եթէ հայերը լուսաւորուել են ուզում, թո՛ղ ռուսերէն լեզուով կրթուին»,— ահա ռուս զօրավարների ղեկավարութեան յանձնուած «ժողովրդական կրթութեան» իրական պատկերը Ռուսաստանի հարիւրամեայ տիրապետութեան ընթացքում:

Մի մտայնութիւն, որից դժբախտաբար զերծ չեն եղել եւ չեն մասամբ այսօր իսկ, ռուս գիտական ու գրական շրջանակներ անդամ:

Աբովեանի կեանքից առաջ բերուած մի տեղեկութիւն եւս արժանի է մասնակի ուշադրութեան,— այն բացասական վերաբերմունքը, որ Աբովեանի հանդէպ ցուցահանում է, ըստ Բողենշտէդտի, դերման գիտնական Աբիխը:

Վերջերս Դորպատի գիտնականներից էր, բնագէտ: Նրա գրչին ենք պարտական մենք Հայաստանի երկրաբանութեանը նուիրուած առաջնակարգ աշխատութիւններից մէկը: Ուրիշ առիթով, երբ անդրադառնալու լինինք ի թիւս դերման ուրիշ ճամբորդների նաեւ Աբիխի ուղեւորութեանը Հայաստան, թերեւս կարելի լինի պրպտումներ անել, Աբիխ-Աբովեան յարաբերութեանց լուսաբանութիւնը տալու համար:

Գրեթէ ամբողջապէս ամփոփած լինելով այն բոլոր տեղեկութիւնները, որ Աբովեանի մասին մեզ հաղորդում է Բողենշտէդտ, այժմ անցնինք ուրիշ խնդիրների: